Լեզուներով խոսելը - հավատացյալի նշանն է Հիսուս Քրիստոսում

Լեզուներով խոսելը այսօր համարվում է ամենա վիճելի պարգեւներից մեկը Քրիստոսի մարմնի մեջ: Սակայն, Յիսուս մասնավորապես նշում է Մարկոս16:17-ում լեզուներով աղոթելը որպես նշան է հավատացյալին, ով հետևում է իրեն: Նա նաեւ ասաց Իր աշակերտներին չհեռանալ Երուսաղեմից մինչեւ նրանք ստանան խոստումը Հորից, եւ օժտված լինեն զորությամբ բարձյալից: Բոլոր ինը պարգեւներից Սուրբ Հոգու լեզուներով խոսելը միակ պարգեւն է որը չի նշված Հին Կտակարանում: Թերեւ, այս է պատճառը որ Հիսուսը նշում է որ լեզուներով խոսելը որպես նշան է Նոր Կտակարանում հավատացյալի համար: Կան շատ մարդիկ ովքեր ցանկանում են որ Մարկոս 16:17-ը չլիներ ավետարանում:Դէ ինչ, այն այնտեղ է: Իմ սիրտը սգում է նրանց համար որոնք ունեն հիանալի Քրիստոնեական ժառանգություն, սակայն մերժում են այս մեկ ճշմարտությունը: Իմ անձնական լեզուների փորձառությունը միշտ եղել է զորությամբ, ազատագրմամբ, եւ ունենալով ինտիմ հարաբերություն Տիրոջ հետ: Եթե Հիսուսը ասաց իր աշակերտներին չհեռանալ քաղաքից առանց նրա, ուրեմն նա պետք է ունենար մի լավ պատճառ: Մեզ անհրաժեշտ է Հոգու զօրությունը:

Անձնականը ընդդեմ հասարակականի

Լեզուների աղոթքը տրված է հավատացյալի հոգու շինության և աճի համար: Կան երկու տարբեր տեսակի լեզուներ, անձնական եւ հասարակական: (1) Հիմնականում հավատացյալը իր կյանքում խոսում է անձնական լեզուներով: Անձնական լեզուներով Խոսելը հանդիսանում է որպես աղոթք և գովասանք դեպի Երկնային Հայրը, և այն չի մեկնաբանվում: Այս աղոթքը եւ գովասանքը նշված է որպես «Հոգու աղոթք:» Երբ դու խոսում ես լեզուներով դա քո հոգին է որ հաղորդակից է լինում քո երկնային Հոր հետ: (2) Հավատացյալը կարող է խոսել լեզուներով հրապարակայնորեն պաշտամունքի ժամանակ եվ այն պետք է միշտ թարգմանվի, բայց եթե թարգմանող չկա, թող լռէ եկեղեցում. թող իր համար և Աստծո հետ խոսի: Եվ այսպես, հասարակական եւ անձնական լեզուներով խոսելը կոչվում է խոսել Աստծու հետ:

Լեզուներով խոսելը անհրաժեշտ է փրկության համար

Ոչ. Երբ անհատը վերստին ծնվում է Սուրբ Հոգու կողմից նա փրկված է, եւ ունի Աստծո բնությունը իր հգու մեջ:

Լեզուներով խոսելու նպատակը

1. նշանները կ'հետևեն - խոստումը Տերից (ՄԱՐԿՈՍ 16:17)
2. Պողոսը բոլորին ցանկացավ խոսել լեզուներով (1.ԿՈՐ. 14:5)
3. Սուրբ Հոգու մկրտության ապացույցը (ԳՈՐԾՔ. 2:4; 10:45,46; 19:6)
4. Նրանք խոսում էին Աստծո հրաշալի գործերը (ԳՈՐԾՔ. 2:11)
5. Նրանք փառավորում էին Աստծուն (ԳՈՐԾՔ. 10:46)
6. նա, որ խոսում է լեզուներով խոսում է Աստծո հետ անմիջական: Նա խորհուրդներ է խոսում (1.ԿՈՐ. 14:2)
7. Իր անձն է շինում (1.ԿՈՐ. 14:4)
8. Լեզուների աղոթքը հոգու աղոթք է: Քո հոգին է աղոթում (1.ԿՈՐ. 14:14)
9. նրանք կարող են լինել հոգեւոր երգեր (1.ԿՈՐ. 14:15)
10. Նաեւ ցույց է տալիս ձեր երախտագիտությունը (1.ԿՈՐ. 14:16)
11. Նշան է անհավատի համար (1.ԿՈՐ. 14:22)
12. Պողոսը խոսեց լեզուներով ամենից ավել (1.ԿՈՐ. 14:18)
13. Նրանք հավաքույթի մասն են կազմում (1.ԿՈՐ. 14:26,27)
14. Նրանք մի ԱՐԳԵԼԵՔ (1.ԿՈՐ. 14:39)
15. Ժողովքը շինվում է երբ թարգմանվում է (1.ԿՈՐ. 14:5)
16. Լեզուների աղոթքը օգնում է մեր խնդիրները / թույլ կողմերը (ՀՌՈՄ. 8:26)
17. Լեզուների աղոթքը շինություն է մեր հավատքին (ՀՈՒԴԱ 20)
18. Երկրպագություն մաքրությամբ եւ միասնությամբ (ՍՈՓՈՆԻԱ 3:9 & ՀՌՈՄ. 15:6)

His House

Ministries

Hishouseofworship.org



ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԻՄՔԵՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ԽՈՍԵԼՈՒ ՊԱՐԳԵՒԻ ՄԱՍԻՆ

Լեզուներով խոսելու պարգեւը խոստմու է Հիսուսի կողմից Իր աշակերտներին (Մարկոս 16:17, Ղուկաս 24:49)

- Նշանն է Հավատացյալի
- Անձնականը ընդդեմ հասարակականի
- Լեզուներով խոսելու նպատակը
- an Apologia - Լեզուներով խոսելու վիճաբանական պաշտպանություն

Սուրբգրային հիմքեր լեզուներով խոսելու պարգեւի մասին- Հարցեր եւ պատասխաններ լեզուների աղոթքի մասին

Արդյո՞ք լեզուները եւ այլ Հոգու պարգեւները այսօրվա համար են: Առարկություններ, հարցեր եւ պատասխաններ լեզուների աղոթքի պարգևի վերաբերյալ, այն ինչ որ խոստացել է Հիսուսը իր աշակերտներին (Մարկոս 16:17, Ղուկաս 24:49):

An Apologia - ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ԽՈՍԵԼՈՒ ՎԻՃԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.«Ես կարիք չունեմ Սուրբ Հոգով մկրտվելու, քանի որ մկրտվել եմ երբ փրկվեցի:»

Աստվածաշունչը սովորեցնում է որ Սուրբ Հոգու մկրտությունը առանձին փորձառություն է փրկությունից: Գործք 8:12-17. Հովհաննես 20:22, Գործք 1: 4

2.«Ես մկրտվել եմ Սուրբ Հոգով, բայց ինձ պետք չէ խոսել լեզուներով:»

Մենք պետք չէ անենք մի բան ինչ չենք ուզում, բայց Սուրբ Հոգու մկրտության աստվածաշնչյան ապացույցը լեզուներով խոսելն է: Մարկոս 16:17, Գործք. 2:4, Գործք. 19:1-6

3.Գործք. 2:4-ում «լեզուների փորձառությունը պատվեր էր միայն քարոզելու ավետարանը օտարերկրացիներին»

Մասամբ ճիշտ է:

Սակայն, իրական լեզուների շարունակական նպատակը եղել է հավատացյալի անձի շինությունը, ոչ թէ ավետարանի քարոզումը: Լեզուները մեր անձի շինության համար է 1Կոր.14:2,4:

Սուրբ Հոգին տրված է մեզ որպես մեր անձնական օգնական, Մխիթարիչ եւ ուսուցիչ: Հովհաննես 16:7,13

4.«Լեզուները ոչ բոլորի համար է:» 1Կոր.12:30

Դա նրանց համար է ովքեր ցանկանում են. Գործք. 2:39:, 1 Կորնթացիս 12:30-ում խոսքը վերագրում է հասարակության մեջ պարգեւի գործունեությանը (որը պետք է թարգմանվի) և ոչ թէ անձնական շինության.1 Կոր.14:14: Նշված է որ «ոչ բոլորն են մարգարեներ» 1կոր.12:29 ,« բայց բոլորը կարող են մարգարեանալ» 1Կոր.14:31

5.«Միթե՞ լեզուներով խոսելը համարվում է Հոգևոր պարգևներից նվազագույնը»:

Ես հաճախ եմ լսում այն հիմնավորումը, որը վերաբերում է լեզուներով խոսելուն որպես «նվազագույն» պարգև կամ «պարգևներից ամենափոքրագույնը», չնայած նրան, որ իրականում ոչ մի սուրբ գրություն (Աստվածաշնչյան հատված) չկա, որտեղ նշվում է այդպիսի բան:

Ոչ էլ կա որևէ հայտանիշ, որ Պողոսի նշած Սուրբ Հոգու պարգևների (շնորհների) ցանկը շարադրված է ինչ որ հատուկ տեսակի կարևոր հերթականությամբ:

Հատկապես եթե հաշվի առնենք, որ Պողոսն իր գրվածքներում ներառում է այլ թվարկումներ, որտեղ նա չի ցուցաբերում հատուկ հերթականության կարգ: Ուստի կարելի է մտածել / հասկանալ, որ Պողոսն այդ հերթականության ցանկին կարևորություն չի տալիս:

Դուք երբևէ լսել եք, մի այնպիսի հավատացյալի, որը համարի «զեխությունը» «փոքրագույն մեղք» (այդքան էլ կարևոր մեղք չէ), քանի որ Պողոսն այն վերջում է թվարկում (Գաղատացիս 5:19-21):

Դուք երբևէ լսել եք, որ հավատացյալն ասի Ձեզ, թե Սուրբ Հոգու պտուղների թվարկման կարգը սկսվում է ամենակարևորից և վերջանում ամենանվազագույն կարևորով:

Դուք երբևէ լսել եք, երբ որևէ մեկը նշի (ասի), որ ինքնատիրապետումը/ժուժկալությունն այդքան էլ կարևոր Հոգու պտուղ չէ, քանի որ այն նշված է վերջում (Գաղատացիս 5:22-23):

6.«Աստվածաշունչը ասում է որ եկեղեցում ընդամենը 3 հոգի պետք է խոսեն լեզուներով - ոչ ավելին, եւ այն պետք է թարգմանվի:» 1Կոր.14:27

> Կրկին, սա նշում է հասարակության մեջ լեզուների գործածումը որպես ծայռայության պարգև (որը պետք է թարգմանվի) եւ ոչ թէ հավատացյալի անհատական լեզուներով աղոթքի օգտագործում: Պողոսը պարզապես ասում է, եթե որեւէ մեկը ունի լեզուների հայտնություն -մեկ առ մեկ, խնդրում եմ - երեք հայտնությունից հետո թող դադարեն: Որովհետև, մենք ստացանք այն հայտնությունը ինչ որ հարկավոր էր:

7.Լեզուների աղոթքը «այսօրվա համար չէ»:

(i)«Լեզուներով խոսելը եւ մարգարեությունը այսօրվա համար չէ:» 1Կոր.13:8,10
Հիմնական խնդիրը այն է թէ երբ է Աստվածաշունչը ասում որ լեզուներն ու մարգարեությունները կդադարեն:

(ii)Պատասխանը գտնվում է 12-համարում.«հիմա փոքր ի շատէ եմ տեղյակ, բայց այն ժամանակ այնպես կ'գիտենամ՝ ինչպես գիտեցած եմ»:

(iii)**ԿԱՏԱՐԵԱԼ** բառը նշանակում է (teleios) «լիավարտ, հասուն, հասնել ավարտին:»

(iv)Պողոսը ասում է որ երբ ժամանակը լիակատար լրանա և հասնի իր ավարտին (այսինքն Քրիստոսի երկրորդ գալուստը) այն ժամանակ մեզ անհրաժեշտ չի լինի հոգևոր պարգևները, քանի որ նրանք միայն ժամանակավոր են: Բայց խնդրում ենք նկատի առեք (նրանք մի օր կդադարեն) փաստը չի նշանակում նվազեցնել իրենց կարեվորությունը այսօր:

(v)«Պարգևները անհրաժեշտ են եղել առաջի դարի եկեղեցու հիմնադրման համար»
Պարգեւները անհրաժեշտ են մինչեւ որ մենք բոլորս հասնենք լիարժեք հոգեւոր հասունությանը: Եփեսացիս 4:11-ը ասում է, որ առաքյալներն ու մարգարեները եկեղեցու շինության համար են, մինչև որ ամենքս հասնենք լիակատար հավատքի և Աստծո Որդու ճանաչման միությանը:

(iii)Տես նաեւ Գործք. 2:39-ը, «Որովհետև ձեզ և ձեր որդկանց համար է այս խոստմունքը, և այն բոլոր հեռավորների համար, որոնց մեր Տէր Աստվածը կ'կանչէ:»

8.«Կորնթոսի Եկեղեցին միակ եկեղեցին էր որ Պողոսը գրել էր լեզուների եւ այլ հոգեւոր պարգեւների մասին, եւ այն եղել էր անբարոյականությամբ լի:»

Այո, Կորնթոսի եկեղեցին ունեցել էր անբարոյական խնդիրներ: Արդյոք դա Սուրբ Հոգուն դարձնում էր անսուրբ:

Կարող ենք դուրս շպրտել Նոր Երուսաղեմը, Գառան հարսանիքը եւ Գառաի կեանքի գիրքը, քանի որ նրանք միայն նշված են Հայտնություն գրքում:

Գործք Առաքելոց գրքում ակնհայտ է որ հոգեւոր պարգեւները եղել են Նոր Կտակարանի նորման: Դա չի եղել մի մեկուսացած երեւույթ կապված կորնթացիների եկեղեցու հետ:

9.«Ես գիտեմ շատ լեզուներով խոսացողների որոնց մեծ մասը կեղծավորներ եւ ձայն հանող ծնծղաներ են:»

Եթե ես գտնեմ մի խնձոր որի մեջ որթ կա, ես կնտրեմ այն չուտել: Բայց երբեք չեմ դադարի խնձոր փնտրելուց: Մենք չենք վաստակում պարգևները, այլ այն ընդունում ենք որպես նվեր:Այնպես որ հոգեւոր պարգևների գործնեությունը ոչ թէ սրբության կամ Քրիստոնեական հասունության վկայություն է, այլ վկայությունն է, որը մենք ստացել ենք:

10.«Շատ վնասներ են եղել պարգևների չարաշահման պատճառով, ի՞նչպես կարող է դա Աստծուց լինել:»

Պարգեւը եկել է դրախտից կատարյալ: Աստված ընտրել է օգտագործելու անկատար անոթների: Մարգարեի հոգին հնազանդ է մարգարեներին:

Մեծ վնասներ են եղել Աստծո խոսքի սխալ մեկնության պատճառով, ա՞ռդյոք պետք է դուրս շպրտենք Աստվածաշունչը: Փոքր ի շատէ գիտենք և

փոքր ի շատէ մարգարեանում ենք: Կան պահեր որ պարգեւները կատարյալ չեն իրենց գործունեության ժամանակ, և այդ է պատճառը որ Աստվածաշունչը ասում է, որ նրանք պետք է քնարկվեն: Ճիշտ աստվածաշնչյան ուսմունքը կնվազեցնի սխալներն ու չարաշահումը պարգևների վերաբերյալ ինչպես որ նախատեսված է, և այն կլինի մի մեծ օրհնություն:

11.«Կան Աֆրիկյան ցեղեր որոնք խոսում են լեզուներով որպես Սատանային երկրպագություն, նաև կան աղանդներ որոնք նույնպես խոսում են լեզուներով:»

Կեղծվածը ապացուցում է իրականը: Ես չեմ հրաժարվի իրական $100-դոլարից, քանի որ ինչ որ մեկը օգտագործում է կեղծը: Ղուկաս 11:11-13-ը ասում է« եթե Ես ձուկ խնդրեմ իմ Երկնային Հորից Նա ինձ փոխարենը օձ չի տա»:

12. «Լեզուներով խոսելը դիվայի՞ն է:»

Ոչ, դա այդպես չէ: Դա Աստծուց է: Մարկոս 16:17-ը հատուկ ասում է որ այն նշան է մեկին ով հավատում եւ հետեւում է Հիսուս Քրիստոսին:

13.«Լեզուներով խոսացող մարդիկ հայտնվում են մի ծիծաղելի դիրքում:»

Այդպես էլ նրանք ովքեր չեն աղոթում:

14. «Դա շատ ամոթալի է: Ինչու՞ է անհրաժեշտ բարձրացնել ձեր ձեռքերն ու պարել, եւ լինել էմոցիոնալ ու երջանիկ:»

Ես դեռ չեմ հանդիպել մեկին ով հրաժարվում է գնալ հասարակական վայր (օրինակ հարսանիք, ծնունդ, կամ սպորտային մի խաղ), քանի որ այնտեղ գնացողներն շատ «էմոցիոնալ են»:

15.«Դա աղանդ է:»

> Խնդրում եմ բացատրեք թէ ինչ է աղանդը:

16. «Ես չեմ հավատում այս բոլոր լեզուներն ու բժշկությունները:»

> Մի անհանգստացեք դրա մասին, դա երբեք տեղի չի ունենա ձեզ հետ: